# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## 2022 թվականի հոկտեմբերի 17-ից 20-ը
## Հունաստան (ք. Աթենք) գործուղման արդյունքների մասին

**1. Անունը, ազգանունը՝**

Արտյոմ Սմբատյան

Կարեն Թամազյան

**2. Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ ՊԵԿ նախագահի առաջին տեղակալ

ՀՀ ՊԵԿ հարկային վարչարարության կազմակերպման, դիտարկման և հսկողության վարչության պետ

**3. Գործուղման վայրը և ժամկետները՝**

Հունաստան, ք. Աթենք, հոկտեմբերի 17-ից 20-ը

**4. Հրավիրող կողմը՝**

Ներեվրոպական հարկային մարմինների կազմակերպություն (IOTA)

**5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

Հայաստանի Հանրապետության հարկային մարմինը հանդիսանում է Ներեվրոպական հարկային մարմինների կազմակերպության անդամ և 2022 թվականի տարեկան միջազգային համաժողովին ՀՀ ՊԵԿ պատվիրակության մասնակցության նպատակն էր՝ ստանալ համապարփակ տեղեկատվություն կազմակերպության և անդամ երկրների նախորդ ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ, ինչպես նաև տեղեկանալ կազմակերպության անդամ երկրների հարկային վարչարարության կազմակերպման նորարար մոտեցումներին ու անելիքներին՝ հատկապես ճգնաժամային իրավիճակներում:

ՀՀ ՊԵԿ պատվիրակությունը ներկա է գտնվել զեկույցների ներկայացմանը և մասնակցել է քննարկումներին, որոնք հիմնականում վերաբերում էին կառավարման հիբրիդային մոդելով (առանց աշխատավայր այցելելու՝ հեռավար եղանակով) ճկուն և արդյունավետ հարկային վարչարարության կազմակերպմանը:

**6. Քննարկված թեմաները՝**

2022 թվականի տարեկան միջազգային համաժողովի ընթացքում ներկայացվել են, 2020 թվականի մարտ ամսից աշխարհում լայն տարածում գտած կորոնավիրուսային հիվանդության և դրա արդյունքում առաջացած ճգնաժամային (սահմանափակումների) և հետճգնաժամային պայմաններում, տարբեր երկրների հարկային մարմինների կողմից հիբրիդային մոդելով հարկային վարչարարության կազմակերպման առանձնահատկությունները և նախանշվել են այդ մոդելի դրական և բացասական կողմերը: Քննարկվել են ապագայում հնարավոր համանման իրավիճակներում հիբրիդային մոդելով հարկային վարչարարության կազմակերպման բարելավման ուղղությունները:

**7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Համաժողովի ընթացքում առանձին հանդիպումներ տեղի չեն ունեցել, այնուամենայիվ աշխատանքային քննարկումներ են տեղի ունեցել համաժողովին մասնակցող թվով 24 երկրների հարկային մարմինների ներկայացուցիչների հետ, որոնց ժամանակ բարձրացվել և կարևորվել է Ներեվրոպական հարկային մարմինների կազմակերպության անդամ հանիսացող հարկային մարմինների միջև տեղեկատվության փոխանակման հարցը (հիմնականում հիբրիդային եղանակով հարկային վարչարարությունը կազմակերպելիս թվային նոր լուծումների գծով):

**8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Համաժողովի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել կամ որոշումներ չեն ընդունվել, սակայն Ներեվրոպական հարկային մարմինների կազմակերպության քարտուղարության հետ պայմանավորվածություններ են ձեռք բերվել առավել

ինտենսիվորեն անդամ երկրների հարկային մարմիններին՝ հարկային վարչարարության կազմակերպման նորություններին տեղեկացնելու վերաբերյալ:

Միաժամանակ համաժողովին մասնակցող առանձին անդամ երկրների հարկային մարմինների ներկայացուցիչների հետ փոխանակվել են կոնտակտային տվյալներ՝ ըստ անհրաժեշտության աշխատանքային կարգով տեղեկություններ փոխանակվելու համար:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

Համաժողովին մասնակցող երկրների հարկային մարմինների ներկայացուցիչների հետ ձեռք են բերվել պայմանավորվածություններ աշխատանքային եղանակով համագործակցության (այդ թվում՝ պաշտոնական էլեկտրոնային փոստերի միջոցով հաղորդակցվելու) վերաբերյալ:

**10. Ստորագրությունը, ամսաթիվը**

**21.10.2022թ.**